

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԴՈՆԱՐԱ ՎՐՈՒՅՐԻ ԲԱԽԶԻՆՅԱՆ**

**ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՐՁԱԿԻ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՈՃԸ**

Ժ.02.01- «Հայոց լեզու» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2017**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ քանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր **Լ. Կ. Եզեկյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր **Գ. Կ. Խաչատրյան**

քանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ **Ն. Ժ. Սարգսյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան  
լեզվահասարակագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2017 թ. նոյեմբերի 27-ին՝  
ժամը 15.00-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում  
գործող ԲՈՒՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան  
լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. հոկտեմբերի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Ն. Սիմոնյան**

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ժամանակակից լեզվաբանության մեջ գրողի խոսքն ընկալվում է որպես իր՝ հեղինակի անհատականությունն ու ինքնատիպությունը դրսևորող լեզվաոճական միջոցների ամբողջություն, որոշակի համակարգ, որի լեզվական տարրերի յուրահատուկ գործածությունը պայմանավորված է հեղինակի անհատական մտածողությամբ, ճաշակով ու աշխարհայացքով, ինչպես նաև լեզվական փաստերի իմացությամբ և ստեղծագործության թեմայով:

Լեզուն և ոճը անբաժանելի հասկացություններ են, սովորաբար միմյանց չեն հակադրվում և պայմանավորված են մեկը մյուսով: Այնուհանդերձ, դրանք ունեն տարբեր արտահայտություններ ու դրսևորումներ: Լեզուն ընդհանուր է, ոճը՝ մասնավոր, որը հստակ դրսևորվում է լեզվական միավորների միջոցով:

Յուրաքանչյուր գրող ազգային լեզվի զարգացման մեջ ունի իր ներդրումը՝ պայմանավորված միայն ու միայն իր անհատական մոտեցումներով և յուրահատուկ ոճով: Պատահական չէ, որ արդի լեզվաբանության մեջ զգալիորեն ավելացել են գրողների ոճի ուսումնասիրությանը նվիրված աշխատությունները: Մասնավորապես մեծ աշխատանք է կատարվել հայ դասականների՝ Րաֆֆու, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Ա. Բակունցի, Հ. Սահյանի և այլոց ստեղծագործությունների լեզվի առանձնահատկությունների ուսումնասիրության ուղղությամբ:

Մ. Սարգսյանի խոսքարվեստի քննությամբ պարզել ենք, որ նրա ոճի ամենաբնորոշ հատկանիշը ժողովրդայնությունն է: Քննության նյութ ենք դարձրել հեղինակի լեզվի ժողովրդայնությունը ձևավորող լեզվաոճական միջոցները թե՛ բառային և թե՛ քերականական մակարդակներում: Գրողի լեզվամտածողությանը և ոճին բնորոշ է նաև քնարականությունը, որ լեզվականորեն ձևավորում են պատկերավորման և արտահայտչական միջոցները:

**Ատենախոսության նպատակը և խնդիրները:** Մեր նպատակն է ուսումնասիրել Մ. Սարգսյանի արձակի լեզուն, դրա առանձնահատկություններն ու արտահայտման եղանակները, որոնք ստեղծում են գեղարվեստական լեզու և անհատական ոճ:

Ատենախոսությանն առաջադրվող **խնդիրներն են.**

ա) Վերլուծել անհատական ոճի ուսումնասիրման տեսության ժամանակակից սկզբունքներն անհատի խոսքի ձևավորման գործում՝ սեփական մոտեցում ձևավորելու նպատակով:

բ) Ուսումնասիրել և դասակարգել Մ. Սարգսյանի ստեղծագործությունների (արձակ) լեզվի բառապաշարը:

գ) Քննել Մ. Սարգսյանի լեզվի քերականական առանձնահատկությունները՝ որպես ոճական երևույթ:

դ) Վեր հանել Մ. Սարգսյանի լեզվամտածողությանը և ոճին բնորոշ պատկերավորման և արտահայտչականության միջոցների առանձնահատկությունները:

**Գիտական նորույթը:** Մ. Սարգսյանի արձակի լեզուն և ոճն ուսումնասիրվում է առաջին անգամ: Պետք է նշել, որ մինչ օրս չեն եղել սույն թեմային առնչվող ուսում-

նասիրություններ: Կարծում ենք՝ և՛ թեմայի բնույթով, և՛ քննվող հարցերի շրջանակով, և՛ քննության հիմնական արդյունքով աշխատանքը կարելի է համարել նորություն:

**Հետազոտության նյութը:** Աշխատանքի ընթացքում օգտագործվել է գրողների լեզվին և ոճին վերաբերող հայալեզու գրեթե ողջ գրականությունը, օգտագործվել են լեզվաոճական աշխատություններ (ռուս դասական գրականության), որոնք ընդգրկում են նաև եվրոպական և ամերիկյան լեզվաբանների ուսումնասիրությունների հիմնական դրույթները:

**Ուսումնասիրության մեթոդը:** Այն պայմանավորված է ուսումնասիրվող նյութի խնդիրներով և նպատակով: Լեզվաոճական քննություն կատարելիս կիրառել ենք բառիմաստի բաղադրիչների վերլուծության, բառային փոխարինումների, բառային չափորոշիչների վերլուծության, կառուցվածքային, զուգադրական մեթոդները:

**Ուսումնասիրության տեսական և գործնական արժեքը:** Աշխատությունը ընդգրկում է լեզվաբանության և՛ տեսական, և՛ կիրառական հարցեր. գրողի արձակի լեզվի ամբողջական ուսումնասիրություն է: Աշխատանքը կարող է օգտակար լինել հայագիտական, ոճագիտական, գրողների լեզվին նվիրված նոր ուսումնասիրությունների, դպրոցական և բուհական դասագրքերի, ոճագիտական հատուկ դասընթացների համար: Այն կարող է օգտագործվել նաև ավարտական և կուրսային աշխատանքներ կատարելիս:

**Ատենախոսության ծավալը և կառուցվածքը:** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ունեն իրենց ենթագլուխները, եզրակացություններից և գրականության ցանկից: Աշխատանքը կազմված է 136 էջից:

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

Աշխատանքի վերաբերյալ կան հրապարակումներ, որոնց ցուցակը ներկայացվում է սեղմագրի վերջում:

**Ատենախոսության հիմնական բովանդակությունը:** Ներածության մեջ համառոտ ներկայացրել ենք այն աշխատությունները, որոնք նվիրված են լեզվի և ոճի քննությանը, առանձնացրել ենք գրողի արձակ երկերի լեզվական որոշ առանձնահատկություններ: Ներկայացրել ենք լեզվի և ոճի ըմբռնումները ժամանակակից լեզվաբանության մեջ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մեր տեսակետները առնչվող հարցերի վերաբերյալ:

**Առաջին գլուխը** վերնագրված է «Մ. Սարգսյանի արձակի բառապաշարը»: Մ. Սարգսյանի արձակի բառապաշարը քննելիս փորձել ենք նախ պարզել տարբեր բառաշերտերի արտահայտչական դերն ու ոճական երանգավորումը՝ նկատի ունենալով, որ հայերենի բառապաշարի տարբեր շերտերը կարող են ունենալ ոճական որոշակի գործառույթ: Գրողի ստեղծագործությունների (արձակ) լեզուն ունի հարուստ բառապաշար. այն իր ակունքներով առնչվում է խոսակցական լեզվին և ոճերին:

Հայ լեզվաբանության մեջ բառապաշարի ոճաբանական քննության տարբեր սկզբունքներ ու մոտեցումներ կան, որոնք բոլորն էլ, ըստ էության, իբրև ելակետ ըն-

դունում են բառերի գործածության ոլորտները, ծագումը, իմաստային առնչությունները և ձևային առանձնահատկությունները:

«**Համագործածական բառեր**» ենթազբախում նախ անդրադարձ է կատարվում համագործածական բառերի ըմբռնմանը՝ համադրելով համագործածական բառերի մասին լեզվաբանության մեջ տիրապետող տեսակետները:

Գրողի լեզվաոճին համագործածական բառերի ոճական գործառույթները ավելի սերտորեն են առնչվում, քան ինքնին ոճական նշույթավոր միավորներ համարվող բարբառային, ժողովրդախոսակցական բառերը, հնաբանությունները, նորաբանությունները, օտարաբանությունները, որոնք ծառայում են ոճական ընդհանուր նպատակների:

Համագործածական բառերը յուրաքանչյուր գրողի լեզվում ունենում են դրսևորման ինքնատիպ ձևեր: Որոշ դեպքերում Մ. Սարգսյանը համագործածական բառերի գործածությամբ է ոճավորում խոսքը: Ոճական այս հնարը հատուկ է հեղինակին. ամենատարբեր իրավիճակները, երևույթները, հոգեկան ապրումները ճիշտ և դիպուկ ընտրված բառի գործածությամբ ներկայացվում են այնպես, որ խոսքը ստանում է անասելի գրավչություն, սովորական բառը ձեռք է բերում նոր ու ինքնատիպ իմաստ: Օրինակ՝ հեղինակը գրում է. «Հարգելի ընթերցող, ես, ռազմաճակատի ճամփան բռնած զորակոչիկս, իմ նախնական մտորումներում հագիվ թե կարողանայի հասնել այս եզրահանգումներին, հագիվ թե իմանայի «զինվորանալու այս **գիտությունը**», որը ձեռք էր բերվելու հետագայում ռազմաճակատի թոհուբոհի մեջ»<sup>1</sup>: Այստեղ *գիտություն* բառը հանդես է գալիս ոճական ընդգծված լիցքով՝ լրացական *փորձառություն* իմաստով, որը ենթադրում է բառի ամենատարբեր բնագավառներում նորովի հանդես գալու հնարավորություն:

Անդրադառնալով Մ. Սարգսյանի կիրառած գրական բառերի առանձնահատկություններին՝ նկատում ենք, որ առաջին հատկանիշը բազմիմաստությունն է: Հաճախ դժվար է որոշել՝ բառի որ իմաստն է կիրառվում: Լեզվաբանության մեջ նման երևույթը կոչվում է *դիֆուզիա*:

« - Իսկ դու գիտե՞ս, թե ինչ է արել Սաքոն...

- Ի՞նչ...

- *Փախցրել է* Մուրադենց աղջկան...

- Իհ, բոլը թաղեմ, *գեշ* տղա է, մեր ածան հավն էլ *փախցրեց*, վրա է բերում Սուսանը»<sup>1</sup>:

Կիրառելով բառային փոխարինման մեթոդը՝ կարելի է որոշել, որ *փախցնել* բառը առաջին կիրառման մեջ նշանակում է. «առանց ավանդական ծիսակատարության տանել՝ ամուսնանալու նպատակով», «առանց ավանդական ծիսակատարության ամուսնանալ», երկրորդում՝ «գողանալ»:

<sup>1</sup>Տե՛ս Սարգսյան Մ., Խաղաղություն պատերազմից առաջ: Չմակարդվող արյուն, Խորհրդային գրող, «Յայաստան» հրատ., Երևան, 1999, էջ 157, 174:

«Նորաբանություններ և հնաբանություններ» ենթազբառով անդրադարձ է կատարվել նորաբանությունների և հնաբանությունների ուսումնասիրությանը:

Մ. Սարգսյանի արձակի բառապաշարում հեղինակային նորակազմությունները թեպետ այնքան էլ շատ չեն, այնուհանդերձ դրանք բնորոշում են հեղինակի ասելիքը: Տարածված են հատկապես համաբանությամբ ստեղծված նոր կազմությունները, օր.<sup>1</sup> **սրտլայն**-սրտնեղ, **աչքանշել**-մատնանշել, **կրակնագործություն**-ասեղնագործություն:

Մ. Սարգսյանը հաճախ դիմում է ածանցման միջոցով նոր բառեր ստեղծելուն: Օրինակ՝ **-եղեն** - «...**զոհեղեն** կպահանջեն...»<sup>2</sup>, «...**հուսեղեն** նամակ եկավ...»<sup>2</sup>, «...որք է...**սրտեղեն է**»<sup>2</sup>: Կան նորաբանություններ, որոնք կապված են գոյականի բայացման հետ, որն ուղեկցվում է իմաստի բարդացմամբ. «...**թոչնանալ** ու **թոչել** դեպի երկինք...»<sup>2</sup>, «...տղե՛րք, **բոցուովել** է պետք ու **կայծակնալ**...»<sup>2</sup>, «...նորից **զորքեցին**...»<sup>2</sup>:

Հեղինակը նորաբանությունների ստեղծման գործում, կարելի է ասել, աչքի չի ընկնում վարպետությամբ, բայց նոր բառերը համատեքստում ծառայում են ոճական ինչ-ինչ նպատակների:

**Հնաբանությունները** պատկանում են լեզվի ոչ գործուն բառաշերտին: Հեղինակի արձակում հնաբանությունների գործածությունը սակավադեպ է. **պատմաբառեր** գրեթե չեն գործածվում, ավելի տարածված են հնաբառերը, օրինակ՝ **այր**, **ակն ընդ ական**, **ատամն ընդ ատամն**, **հեղել**, **կենաց ձայներ**, **հարգանաց հավաստիք**: Այս բառերի և բառակապակցությունների գործածությունը չի բխում պատմական ժամանակաշրջանին բնորոշ երանգ հաղորդելու ոճական անհրաժեշտությունից, այլ պարզապես հեղինակի խոսքը ծանրակշիռ ու ազդեցիկ դարձնելու միջոց է:

Նկատել ենք սակայն, որ «Դարձը» դրամատիկական վիպակում գրողը դիմում է նման բառերի գործածությանը՝ պատմական միջավայր ստեղծելու միտումով: Օրինակ՝ «Օ՛, **տեր իմ**, **սեպուհ**, պահակները այս լրբին տեսնելուն պես կամ հայտնվում են գետի մեջ, կամ ինքնասպան են լինում...»<sup>3</sup>: «Նրանց բնակատեղիները, **դիցարաններն** ու **մեհյանները** քարոքանդ արին»<sup>3</sup>: Նշված հնաբանությունների գործածությունն առնչվում է հեղինակի ընտրած նյութի բովանդակությանը, նաև նպաստում է վիպակի լեզվի արտահայտչականությանը: օօօօօօօօօօօ

Հնաբանությունների սակավաթիվ կիրառությունը թերևս պայմանավորված է ստեղծագործությունների թեմատիկայով. պատմական անցյալը պատկերող ստեղծագործությունները Մ. Սարգսյանի արձակում մեծ թիվ չեն կազմում:

«**Բարբառային և ժողովրդախոսակցական բառաշերտեր**» ենթազբառով անդրադարձել ենք այս բառաշերտերի քննությանը:

<sup>2</sup>Տե՛ս Սարգսյան Մ., Երկեր, 2 հատորով, հատ. 1, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, հատ. 2, «Հայաստան» հրատ., Երևան, 1977, էջք 10,18, 22, 34, 77, 80:

<sup>3</sup>Տե՛ս Սարգսյան Մ., Դարձ, «Հայաստան», Երևան, 2001, էջք 5, 7- 8:

Մ. Սարգսյանի արձակում բարբառային բառերը կիրառվում են հիմնականում ջավախեցի հերոսների խոսքում կամ Զավախքի մասին պատումներում: «Հերոսի անհատական բնութագրման հստակեցման համար բարբառային բառերի կիրառման, ինչպես նաև գնահատման մեջ անհրաժեշտ է մեծ տակտ: Գավառաբանությունն ինքն իրենով հիմնականում բնորոշ է կիսագրագետ խոսքին: Այս առումով էլ այն կարող է օգտագործվել այս կամ այն հերոսի նկարագրման համար՝ որպես շփման ձև, նրան բնորոշ հատկությունների տիպականացման նպատակով: Հերոսի խոսքի ծանրաբեռնումը գավառաբանություններով կարող է նրա մասին սխալ պատկերացում ստեղծել՝ միակողմանիորեն առաջ քաշելով միայն այդ առանձնահատկությունները»<sup>4</sup>:

Նշենք, որ բարբառային բառը կարող է լինել տվյալ ժողովրդի որևէ հատվածի կենցաղի հետ կապված առարկայի միակ անվանումը. այս դեպքում նման բառերի կիրառությունը անհրաժեշտ է:

Բարբառային տարրերը երբեմն էլ գործածվում են հեղինակի խոսքին կենդանություն և հուզականություն հաղորդելու միտումով: Մ. Սարգսյանի արձակում շատ են այնպիսի բառերը, որոնք ծագումով բարբառային են, բայց գործածվում են ընդհանուր խոսակցական լեզվում: Օրինակ՝ «...կողոտ մախմուրին կհիշեր...»<sup>5</sup>, «...թե՛յ տուր, թող խմեն, ախր, մոր բալաներ են»<sup>5</sup>: Հաճախ են հանդիպում բարբառային-խոսակցական երանգ ունեցող տարբերակների՝ միայն բանավոր լեզվին հատուկ գործածություններ, օրինակ՝ **հայր-հեր, մայր-մեր, լույս-լուս, քույր-քուր, փայտ-փետ, այս-էս, այդ-էդ, հա, համ, բա, ոնց** և այլն: Հետաքրքիր է, որ գրողը երբեմն կողք կողքի գործածում է գրական և խոսակցական եզրերով հոմանշային զույգեր՝ միևնույն հատկանիշի տարբեր աստիճանները զուգորդելու նպատակով, օրինակ՝ «...խելագա՞ր է, խելա՞ռ, թե՞ ցնդած...»<sup>5</sup>: Գրողի վարպետության մասին է վկայում այն, որ յուրաքանչյուր կերպարի խոսքի ոճավորման համար նա կարողանում է ճիշտ գտնել ու ընտրել լեզվական համապատասխան միջոցներ, որոնք նաև բնութագրում են տվյալ տարածքը ներկայացնող անհատների:

Այսպիսով, Մ. Սարգսյանը առանց վարանելու բարբառներից վերցրել է այն, ինչը անհրաժեշտ է եղել իր երկերին և ունի ոճական արժեք: Որքան էլ խոսակցական տարրերն ու բարբառային ձևերը թույլատրելի ու հանձնարարելի են, այնուհանդերձ Մ. Սարգսյանը դրանք կիրառել է չափավոր ու հմտորեն:

Ժողովրդախոսակցական բառաշերտում կարելի է առանձնացնել **գոեհկաբանությունները**: Այդ բառերը հիմնականում արհամարհական, անարգական երանգ ունեն: Մ. Սարգսյանը դրանք կիրառում է հերոսների խոսքում՝ բնորոշելու համար թշնամուն, պախարակելու պատերազմական իրավիճակը: Օրինակ՝ «Կուզես ջրից չոր դուրս գա՞ս, տո՛ր իշու ծնունդ»<sup>6</sup>: «...ձա՛յնդ, քաֆթառ...»<sup>6</sup>:

<sup>4</sup>Տե՛ս **Тимофеев Л. И.**, Основы теории литературы, М., "Просвещение", 1976, с.238.

<sup>5</sup>Տե՛ս **Սարգսյան Մ.**, նշվ. աշխ., էջք 52, 12, 11:

<sup>6</sup>Տե՛ս **Սարգսյան Մ.**, նշվ. աշխ., էջք 48, 217:

Գոեհկաբանությունների գործածությունը մասամբ էլ պայմանավորված է ժողովրդի մտածելակերպին ու նրա կենդանի խոսքին հարազատ մնալու միտումով:

«**Օտար բառեր**» ենթազվխում անդրադարձ է կատարվել այս բառերի ըմբռնմանը: Օտար բառերի կիրառությունը անխուսափելի երևույթ է բոլոր լեզուների համար: Որքան էլ օտարաբանությունները դիտվեն իբրև լեզվական անհարկի միավորներ, այնուհանդերձ գեղարվեստական խոսքում դրանք ունեն ոճական որոշակի արժեք:

Մ. Սարգսյանի արձակում օտար բառերի գործածությունը արդարացվում է նախևառաջ նրանով, որ ստեղծվում է նկարագրվող միջավայրի պատկեր: Հատկապես պատերազմական թեմատիկային նվիրված երկերում դրանք տիպական ու տպավորիչ են դարձնում նկարագրությունները: Մ. Սարգսյանը օտար բառերը կիրառում է ոչ միայն հերոսների, այլև իր խոսքում օտար մարդկանց կենցաղն ու գործունեությունը նկարագրելիս: Օտար բառերն առավելապես ռուսերեն, թուրքերեն և պարսկերեն միավորներ են, որոնք գործածում են հիմնականում այդ ազգերին պատկանող հերոսները: Նման բառերի կիրառմամբ հերոսները նկարագրվում են բազմակողմանի, ինչ-որ չափով բնութագրվում են դրական և բացասական կերպարները: Օր.<sup>7</sup> «Օնբաշի Ումուդը կասկածանքով նայում էր կիսաբաց դռանը... Հաղթողն ավելի **ջոմարդ**, ավելի բացսիրտ է լինում: Պարտվողից վախեցիր, նա հող է կորցրել, հարազատ է կորցրել... Մեկ էլ տեսար այս խոլ ու **քոռ** տնից թռավ **գյուլլեն** ու խրվեց սիրտդ, դե Ումուդ, **ումուդդ** կտրվեց, գնա խառնվիր հազար տարվա մեռելների: Մեռնելն, Ումուդ, ավելի **նաղդ** է, քան ապրելը»<sup>7</sup>:

Ընդգծենք նաև մի անվիճելի հանգամանք. օտար բառերի օգտագործումն ստեղծում է ազգային միջավայր, յուրահատուկ լեզվամտածողություն և աշխարհընկալում:

«**Դարձվածային միավորներ**» ենթազվխում անդրադարձ է կատարվել դարձվածքների և կայուն բառակապակցությունների քննությանը:

«Հայերենի լեզվական նյութը ԿԲ-ները (կայուն բառակապակցություն) հետևյալ 4 տեսակների մեջ բաժանելու հնարավորություն և հիմք է տալիս. 1) բաղադրյալ անվանումներ, 2) դարձվածային արտահայտություններ, 3) ոչ փոխաբերական հարադրական բայեր և 4) դարձվածքներ (իդիոմ)»<sup>8</sup>: Մ. Սարգսյանի արձակում դարձվածային միավորները միօրինակ չեն: Դրանք արտահայտվում են ոչ միայն կայուն բառակապակցություններով ու վերլուծական բայերով, այլև նախադասություններով, նախադասության տիպի կառուցվածքով՝ թևավոր խոսքեր, առածներ, ասացվածքներ, անեծքներ, օրհնանքներ: Մ. Սարգսյանի արձակում առավելապես տարածված են ժողովրդական ծագում ունեցող դարձվածքները. սա գրողի

<sup>7</sup>Տե՛ս Սարգսյան Մ., Խաչված քաղաքը, «Հայաստան» հրատ., Երևան, 1996, էջ 35:

<sup>8</sup>Տե՛ս Բեդիրյան Պ., Ակնարկներ ժամանակակից հայերենի դարձվածաբանության, «Ասողիկ» հրատ., Երևան, 2007, էջ 5:



լեզվի ժողովրդայնության հիմնական պայմաններից է: Ըստ այդմ էլ՝ տարբերակել ենք՝

1. Ազգային ծագում ունեցող դարձվածքներ. այստեղ առանձնացրել ենք հետևյալ խմբերը.

ա) Մ. Սարգսյանի լեզվի ժողովրդայնությանը նպաստում են *հարադրավոր բայերի իմաստառճական կիրառումները*:

Հ. Պապոյանը նշում է. «Հարադիր բառերը հայերենի լեզվամտածողությանը ազգային երանգ տվող կարևոր միջոց են և առավել ցայտուն կերպով են արտացոլում մեր ժողովրդի պատկերավոր արտահայտվելու անսպառ կարողությունները: Հարադրությունների զգալի մասը, մասնավորապես բայական, անցնելով սերունդների բովով, ստացել է դարձվածաբանական արժեք և հարստացնում է մեր ժողովրդի խոր կենսափիլիսոփայությունն ու իմաստությունը»<sup>9</sup>: Սարգսյանը նախապատվությունը հաճախ է տալիս հարադրավոր ձևերին՝ լուր տալ – տեղեկացնել: «-Եզներին չմոտենաս, մանչս, հարու կտան,- ասում է սայլապանը»<sup>10</sup>: «...հորթի պես տրտինգ եմ տալիս»<sup>10</sup>:

բ) *ժողովրդական օրինանքներ, անեծքներ, մաղթանքներ*, որոնք պատկերավոր բնույթ ունեն և փոխաբերական իմաստ ստանալով՝ վերածվել են դարձվածային միավորների: Օրինակ՝ «Թող պապի հող ու ջրով թողը երկար կյանք ունենա»<sup>11</sup>: «...վրեդ մի թիգ հող բուննի, հա՛...»<sup>11</sup>: «Օր ու արև չտեսնեք...»<sup>11</sup>:

Առաձներն ու ասացվածքներն արտահայտում են ժողովրդի դարավոր իմաստությունը, սովորույթները, ապրելակերպը: Կառուցվածքով դրանք նախադասություններ են, տրամաբանորեն համապատասխանում են դատողությանը: Բերենք մի քանի օրինակ Մ. Սարգսյանի արձակ երկերից. «Լեզվիդ չափ ու չվան դիր, նոր խոսիր...»<sup>10</sup>: «Մարտադաշտում մեկն էլ զինվոր է»<sup>10</sup>: «Սոխը սխտորից քաղցր չէ»<sup>10</sup>:

գ) *Բարբառային դարձվածքներ*՝ թաժա մեռելի նման ձեռքերը դարսել դոշին<sup>11</sup>, փեշակ տալ<sup>11</sup>, բաց քամակին կատու շալակելը պակասել<sup>11</sup> ևն:

դ) Հեղինակի կողմից կիրառվող որոշ դարձվածքներ ունեն *աստվածաշնչյան ծագում մերը մանուկին ուրանալ<sup>11</sup>, մեղա՛քեզ Տեր<sup>11</sup>, սատանայի մատը խառը լինել, Աստված եթե մեկ դուռը փակեց, բացում է մյուսը<sup>11</sup>* ևն:

2. Հեղինակային դիպուկ ասույթներ, արտահայտություններ, դարձվածքներ, որոնք բաժանել ենք մի քանի խմբի.

ա) *Բաղադրիչների փոփոխություններով կիրառվող դարձվածքներ՝ հասնել քաղաքի (մարդկանց) ականջին<sup>11</sup>, որևէ մեկի փայլը (հացը) ուտել, քարին (սառույցին) գրվել<sup>11</sup>* ևն:

Այս դարձվածքներն ստեղծված են գոյություն ունեցողների հիման վրա(փոփոխված բառը տրված է փակագծերում):

<sup>9</sup>Տե՛ս Պապոյան Հ., Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, «Լույս» հրատ., Երևան, 1970, էջ 48:

<sup>10</sup>Տե՛ս Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջք 23, 46, 49, 44, 41:

<sup>11</sup>Տե՛ս Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջք 51, 62, 64, 7, 10, 11, 29, 6, 15, 8, 33:

Փոփոխությունները կապված են բառի փոխանվանական գործածության հետ:

բ) **Կառուցվածքի փոփոխություններով կիրառվող դարձվածքներ՝ մարտադաշտում մեկն էլ է զինվոր, մի ձեռքով ծափ տալ<sup>12</sup>, մի ծաղկով գարուն գալ<sup>12</sup>** ևն:

Առաջին դարձվածքը ռուսերենի *один в поле не воин* արտահայտության թարգմանությունն է՝ փոփոխված տարբերակով: *Մի ձեռքով ծափ տալ-ը* կազմված է *մի ձեռքով ծափ չեն տալիս* (կամ *մի ձեռքը ծափ չի տալիս*) թևավոր խոսքից, *մի ծաղկով գարուն գալ-ը* մի ծաղկով գարուն չի գալիս-ի հականիշն է:

գ) **Գոյություն ունեցող դարձվածքի կառուցվածքով կիրառվող դարձվածքներ՝ աչքից էլ պրծնել, աչքացավից էլ<sup>12</sup>, որսը կերավ որսորդին<sup>12</sup>, միտքը տաշել<sup>12</sup>, չոր դուրս գալ<sup>12</sup>** ևն:

դ) **Հեղինակային դարձվածքներ ու արտահայտություններ՝ աչքերը կորցրին ստվերը տեսնելու շնորհքը<sup>12</sup>, քարի տակից մատ թափ տալ<sup>12</sup>, թե՛ չարը սա է, չարիքից ազատիր, կաշխատես՝ մարդ ես, չաշխատես՝ գայլ ես<sup>12</sup>** ևն, որոնց կիրառությունը համատեքստում ոճականորեն արդարացված է ու տեղին:

ե) **Օտարալեզու դարձվածքների թարգմանություններ, պատճեններ՝** կամ հականշային կիրառումներ՝ *մարտադաշտում մեկն էլ է զինվոր, սոխը սխտորից քաղցր չէ<sup>12</sup>, կաշին ու ոսկորը ինձ, մնացածը քեզ<sup>12</sup>* ևն:

Ակնհայտ է, որ դարձվածային միավորների կամ առած-ասացվածքների միտումնավոր փոփոխությունը հեղինակի համար ոչ միայն գեղարվեստական պատկերների ստեղծման լեզվական միջոց է, այլև ինքնատիպ մտածողության արտահայտման ձև:

**Երկրորդ գլուխը** վերնագրված է «Քերականական առանձնահատկություններ»:

Մ. Սարգսյանի գեղարվեստական արձակում արտահայտչական յուրահատկություններով առանձնանում են նաև քերականական զուգաձևությունները: Դրանք արտահայտվում են գոյականի թվի, հոլովի, առկայացման կարգերի, ածականի համեմատության աստիճանների գործածությամբ: Հետաքրքիր են նաև դերանունների, բայերի արտահայտչական հնարավորությունները:

«**Ձևաբանական առանձնահատկություններ**» ենթագլխում նախ անդրադարձ է կատարվել ձևաբանական զուգաձևություններին: Սրանք գրողի լեզվում հիմնականում առնչվում են խոսակցական ձևերի դրսևորումներին:

Անձնանունները սովորաբար հոգնակի թվով չեն գործածվում, սակայն որոշ դեպքերում դրանք կարող են կիրառվել նաև հոգնակի ձևերով՝ ցույց տալու համար տվյալ հատուկ անվանը բնորոշ ընդհանուր տիպական հատկանիշ ինչպես բացասական, այնպես էլ դրական իմաստով: «...երբ **Անդրանիկներն** ու **Նժդեհները** դառնում են **Վարդանների, Տիգրանների** արյան ու հերոսության ժառանգորդները»<sup>13</sup>:

Մ. Սարգսյանը գույների ներդաշնակ համադրությամբ գեղարվեստական արձակում կերտում է հիրավի բանաստեղծական պատկերներ՝ միահյուսելով կարոտը

<sup>12</sup>Տե՛ս Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջք 14, 11, 20, 8, 6, 49, 16, 69:

<sup>13</sup>Տե՛ս Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջ 47:

մանկությանը, հայրենի բնաշխարհին ու հայրենակիցներին.«Գույների զարմանալի խաղերով է իջնում մութը. **մութ կարմիր, բաց կապույտ, թույլ սևաներկ, սև մթություն** և, վերջապես, մի փունջ աստղով զուգված տեղական մի լուսին»<sup>14</sup>:

Դերանվան տարբերակային ձևերը նույնպես աչքի են ընկնում իմաստային նրբերանգներով: Հեղինակը երբեմն գործածում է ցուցական դերանունները անձերի փոխարեն: Այս դեպքում դրանցով անձ ցույց տալը ոճական նշանակություն ունի, քանի որ որոշակի բացասական վերաբերմունք է ընդգծվում: Օրինակ՝ «- Դու ո՞վ ես, ինչպե՞ս ես, **սրան** նայեցե՞ք, եկե՛լ, խառնվե՛լ է մեր ընտանեկան հարցերին»<sup>15</sup>:

Հարցական դերանուններով հեղինակն արտահայտում է երկրնտրանք, կասկած, նաև անորոշություն և զարմանք: Օրինակ՝ «Աշխարհք է, **ի՞նչ** իմանաս, էգուց **ի՞նչ** կպատահի...»<sup>15</sup>:

**Բայի** արտահայտչական հնարավորությունները ավելի մեծ են՝ պայմանավորված քերականական կարգերի և իմաստների բազմազանությամբ: Ոճական երանգավորումով հարուստ են ժամանակի և եղանակի կարգերը:

Երբեմն հեղինակը հերոսների խոսքը համեմուն է Կարնո բարբառի տարրերով և ներկա ժամանակը կազմում բարբառին բնորոշ ձևով: Օրինակ՝ «-Ես տուն **կերթամ**, գնացե՛ք ձեզի համար է՛շ գտեք...»<sup>15</sup>:

Սահմանական եղանակի ներկա ժամանակը խոսակցական լեզվում երբեմն կիրառվում է ապառնիի փոխարեն և ընկալվում որպես հաստատ կատարվող գործողություն: Օրինակ՝ «Ես ու մայրս **վտարվում ենք** նրա սենյակից, տատիս մոտ: «Վաղը **մեկնում ենք** ռազմաճակատ»<sup>16</sup>:

Անցյալ կատարյալը, որը ցույց է տալիս ավարտված, կատարված գործողություն, ևս կարող է գործածվել ներկա ժամանակի փոխարեն: Օրինակ՝ «-Դե, տղաներ, **գնացի՛նք**, ուռռա՛...»<sup>14</sup>: «-Իրար **հասկացանք**,- ասաց: -Դե, մենք հայրենասեր մարդիկ ենք»<sup>14</sup>: Տվյալ խոսքային միջավայրում ստեղծված անմիջականությունն ու հուզականությունը կարող են ենթադրել նաև ներկա ժամանակի առկայություն:

Հրամայականի իմաստն արտահայտվում է անդեմ նախադասություններով: Օրինակ՝ «-**Նռնակները չնետել ներքև**, կվնասվեն նաև մերոնք...»<sup>14</sup>: «-**Լոճի...**, - հրամայում է կապիտանը»<sup>14</sup>:

Գրողը ձևաբանական իրողությունները ընտրելիս ձգտում է գտնել չափը, որից պակասը կամ ավելին խախտում են նրա և ընթերցողի միջև առաջացող կապը: Մյուս կողմից՝ նա լուծում է մեկ այլ կարևոր հարց. Սարգսյանը փորձում է ավելի գործածական դարձնել հայրենի բարբառը, հայրենի բառն ու բանը:

«**Շարահյուսական առանձնահատկություններ**» ենթազխում անդրադարձ է կատարվել շարահյուսական իրողություններին: Յուրաքանչյուր գրողի վարպետությունը, ոճական ինքնատիպությունը ավելի ակնհայտ է **շարահյուսական** ոլոր-

<sup>14</sup>Տե՛ս Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջք60, 430, 222, 425, 446:

<sup>15</sup>Տե՛ս Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջք 227, 418, 9:

<sup>16</sup>Տե՛ս Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջ 504:

տում: «Շատախոս չէ հեղինակը, չի ընկնում մանվածապատ դատողությունների ետևից, խուսափում է մեջտեղ քաշել ոճը ծանրացնող նկարագրություններ: Քիչ «ընագիր», շատ «ենթաբնագիր», կարճ «տեքստի» միջոցով հարուստ «ենթատեքստ»- այս մեթոդին է հետևում Մ. Սարգսյանը»,- գրում է Սևակ Արզումանյանը<sup>17</sup>:

Բնության նկարագրությունները նպաստում են հերոսների անհատականացմանը, նրանց ներքին զգացողությունների, հոգեվիճակների, ուրախությունների, տառապանքների, նրանց կայացրած որոշումների, եզրահանգումների բացահայտմանը և հաճախ, նախորդելով դեպքերին, ենթադրում մոտալուտ իրավիճակներ: Նկարագրությունները կառուցվում են հիմնականում երկկազմ նախադասություններով: Օրինակ՝ «Փափուկ մի հով է անցնում լեռան լանջերով, բերելով ծաղիկների շշուկ և ծառերի հառաչ: Լուսինը լեռան թիկունքից դուրս է հանում դեղնավուն ճակատը և ապա հսկայական սկավառակի նման զարկում սարի կատարին...»<sup>18</sup>:

Մ. Սարգսյանի ստեղծագործություններում հեղինակային խոսքը հիմնականում կանոնավոր է, եղած շեղումները պայմանավորված են նրա լեզվի ժողովրդայնությամբ, հեղինակային պատումի հիմքը հիմնականում պատմողական բնույթի երկկազմ նախադասություններն են, իսկ միակազմ նախադասություններ նա օգտագործում է վերհուշի դեպքում, բնության նկարագրություններում, իր և հերոսների ապրումների մասին խոսելիս:

Մ. Սարգսյանի հեղինակային խոսքին հատուկ են բազմակի անդամներով նախադասությունները, որոնք բնութագրվում են մեծ արտահայտչականությամբ: Օրինակներ՝ «Հետո զգույշ էր. ստուգում էր: Հիմա հեզ է, փխրուն, հնազանդվում է, խոստովանում... Մեջքը դողում է, սառչում, ամաչում»<sup>19</sup>: «... սպանել էր, ում ցանկացել էր, քանդել, ջարդել էր, ինչ ուզել էր, բայց հետո թողնելով իր չար հետքը՝ կորել, գնացել էր»<sup>19</sup>:

Ուսումնասիրելով Մ. Սարգսյանի արձակ երկերում շարահյուսական տարբեր միավորները՝ կարող ենք արձանագրել, որ հեղինակի խոսքարվեստին առավել բնորոշ են երկանդամ, մասամբ նաև բազմաբարդ ստորադասական կառույցները:

Պատմողական, հարցական, հրամայական և բացականչական նախադասությունները համապատասխան խոսքային իրադրության մեջ գործածվելիս հեղինակի խոսքը դարձնում են ավելի հուզական ու արտահայտիչ: Դրանցից յուրաքանչյուրը դրսևորում է իմաստային և ոճական նուրբ առանձնահատկություններ, որոնք ոճական այս կամ այն նրբերանգն արտահայտելիս հաճախ դառնում են անփոխարինելի շարահյուսական դարձույթներ:

Այսպիսով, հեղինակի գեղարվեստական մտածողության առանձնահատկությունը, ստեղծագործությունների թեմատիկան, վերհուշը, իր և հերոսի, բնության և

<sup>17</sup> Տես Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, Գիրք 2, Սովետական գրող, Երևան, 1980, էջ 123:

<sup>18</sup> Տես Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջ 67:

<sup>19</sup> Տես Սարգսյան Մ., Դարավերջի հայը, Խորհրդային գրող, «Հայաստան» հրատ., Երևան, 1999, էջք 157, 174:

աղետաբեր պատերազմի նկարագրությունները, գրողի լեզվին հատուկ քնարականությունն ու բանաստեղծականությունը պայմանավորում են շարահյուսական իրողությունների ոճական կիրառությունները:

**Երրորդ գլուխը** վերնագրված է «Մ. Սարգսյանի արձակի լեզվի պատկերավորման և արտահայտչականության միջոցները»: Բառապաշարային ու քերականական իրողությունների քննությունը բացահայտում է հեղինակի ընդգծված հակումը դեպի ժողովրդական տարերքը: Նրա լեզվամտածողությանը և ոճին բնորոշ է քնարականությունը, որը ձևավորվում է պատկերավորման և արտահայտչական միջոցների ինքնատիպ կիրառություններով:

«Այլաբերություններ» ենթագլխում անդրադարձ է կատարվել այլաբերությունների ուսումնասիրությանը: Մ. Սարգսյանի արձակ երկերին բնորոշ են հիմնականում այլաբերության կամ փոխակերպության բառային դրսևորումները: Գրողի ոճին առավել բնորոշ են **մակդիրը, համեմատությունը, փոխաբերությունը, անձնավորումը, շրջասույթը, փոխանունությունը, հեգնանքը**:

**ՄԱԿԴԻՐ**: Մակդիրի միջոցով հեղինակն ընդգծում է առարկայի որևէ հատկանիշ, արտահայտում իր վերաբերմունքն ու գնահատականը՝ միաժամանակ ստեղծելով գեղարվեստական պատկեր: Այդպիսիք են **փշոտ մտքեր**<sup>20</sup>, **հողաբույր աստվածներ**<sup>20</sup>, **անոթի հայացքներ**<sup>20</sup>:

Գեղարվեստական խոսքին պատկերավորություն են հաղորդում հակառակ իմաստ արտահայտող կամ հականիշներով կառուցված մակդիրները: Հակադրության հիմունքով կազմված այդպիսի յուրօրինակ դարձույթը կոչվում է **օքսիմորոն**: Ըստ էության՝ դրանց բաղադրիչներն արտահայտում են միմյանց բացառող և անհամատեղելի հատկանիշներ: Օրինակ՝ **անհնարին հնարք**<sup>20</sup>, **անիրական իրականություն**<sup>21</sup>, **անդաշն ներդաշնակություն**<sup>21</sup>:

**ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ**: Բացի համեմատվող առարկաների կամ երևույթների միջև եղած ընդհանրությունները նշելուց՝ այլաբերության այս տեսակն արտահայտում է նաև հեղինակի որոշակի վերաբերմունքը համեմատվող առարկայի կամ անձի հանդեպ: Օրինակ՝ «...մարդիկ կրքոտ են աղավնու նման»<sup>20</sup>: «...Նայիր և մեռիր սիրահարի և ոչ կեղտաբերան սրիկայի նման»<sup>20</sup>:

**ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**: Փոխաբերության հիմքում առարկաների, երևույթների արտաքին կամ ներքին որևէ հատկանիշի նմանության զուգորդությունն է: Փոխաբերությունները խոսքին հաղորդում են արտասովոր գեղեցկություն, նկարագրությունը դարձնում են տպավորիչ ու ներգործուն, բնությունը ներկայացնում են որպես կենդանի գոյություն, իսկ բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունները՝ տեսանելի և շարժուն:

Մ. Սարգսյանի փոխաբերությունները կարելի է դասակարգել ըստ փոխաբերման եղանակի:

Առաջին հերթին աչքի են ընկնում գործողությունը սաստկացնող, արա-

<sup>20</sup>Տե՛ս Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջք 37, 34, 3, 4, 11:

<sup>21</sup>Տե՛ս Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջք 263, 262:

գացնող ևն փոխաբերությունները: Օր.՝ *հորս հայացքը կրակում էր մորս վրա*<sup>22</sup>, *փոթորկվել, եռացել է նրա արյունը*<sup>22</sup>, *լեզուն ուռչել է՝ կրկնելով, լուրը ձնագնդի նման գնալով մեծացավ*<sup>22</sup>:

Երկրորդ խմբի փոխաբերություններն առարկային վերագրում են գործողություն, որը կատարվում է տվյալ առարկայի հետ: Օր.՝ *աթոռը սուլեց ու իջավ նրա գլխին, աթոռը իջել է գլխին*<sup>22</sup>, *նացիոնալիզմը քեզ կերել է*<sup>22</sup>:

Երրորդ խմբի փոխաբերությունները բնության երևույթները ներկայացնում են որպես կենդանի, շնչավորված առարկայի գործողություն: Օր.՝ *լուսությունը վերագտավ իրեն*<sup>22</sup>, *ծայները մարեցին*<sup>22</sup>:

**ԱՆՁՆԱՎՈՐՈՒՄ:** Պատահական չէ, որ անձնավորումը գործածվում է հատկապես գեղարվեստական պատկերներ կերտելիս: Օր.՝ «Արդեն կապտել է երկինքը, և սփրթնած լուսաբացը ճիգ է անում իրեն կարգի բերելու, որ ներկայանա աշխարհին»<sup>23</sup>: Անձնավորման օրինակները գրողի արձակ երկերին հաղորդում են բանաստեղծական հմայք՝ ստեղծելով ոճականորեն հագեցված ու վառ պատկերավորությամբ օժտված գեղարվեստական խոսք:

**ՇՐՋԱՍՈՒՅԹ (ՇՐՋԱՍՈՒԹՅՈՒՆ):** Մ. Սարգսյանի ստեղծագործություններին այնքան էլ բնորոշ չէ **շրջասությունների** կիրառությունը: Շրջասությունները սովորաբար անվանողական արժեք ունեն: Ընդ որում միևնույն առարկան կարող է տարբեր բնութագրումներ ունենալ: Օրինակ՝ համեմատելով և ընդգծելով հին աստվածների և Քրիստոսի հակադրությունը՝ գրողը վերջինիս անվանում է **միաստված**. «Գալիս է միաստվածը, հզոր, եզակին»<sup>24</sup>: Հեղինակը գործածում է նաև այնպիսի շրջասություններ, որոնք առնչվում են Աստվածաշնչին: Օրինակ՝ **նախատասի՝ Եվայի նման...**<sup>25</sup>, **նախամոր տեսքով**<sup>25</sup>:

**ՓՈՒՍԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ:** Փոխանունությունը խոսակցական ոճի դրսևորում է: Առարկաների, երևույթների, իրողությունների միջև դրսևորվում են տարաբնույթ հարաբերություններ: Օրինակներ՝ «...իսկ մենք մեր տանն ենք, եկեք այս **սեղանը** մարդավարի վայելենք...»<sup>24</sup>: «Հինգերորդ դասարանում ես արդեն ծանոթ էի **Ե. Չարենցին**»<sup>24</sup>: «**Գյուղն** ապրում էր իր սովորական աշնանային առօրյան...»<sup>25</sup>:

**ՀԵՔՆԱՆՔ:** Մ. Սարգսյանի արձակ ստեղծագործություններին բնորոշ է նաև **հեզնանքը**՝ որպես երգիծանք ստեղծող լեզվական միջոց: Այս դեպքում հեղինակի համար առաջնային է դառնում գործածվող արտահայտության հնչերանգը, բառի նպատակային սխալ կիրառությունը: Օրինակ՝ «... **Լամվ ծրագիր է**, մեր բաց քամակին կատու շալակելն է պակաս...»<sup>25</sup>:

«**Բանադարձումներ**» ենթագլխում անդրադարձ է կատարվել բանադարձումների ըմբռնմանը: Գրողը **ճարտասանական հարցն ու ճարտասանական բացական-**

<sup>22</sup>Տե՛ս **Սարգսյան Մ.**, Անանձնական կյանք՝ անձնական ցավերով, «Հայաստան» հրատ., Երևան, 2005, էջք 22, 7, 14, 18, 32, 22:

<sup>23</sup>Տե՛ս **Սարգսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 614:

<sup>24</sup>Տե՛ս **Սարգսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 33:

<sup>25</sup>Տե՛ս **Սարգսյան Մ.**, նշվ. աշխ., էջք 6, 8, 23, 10-11:

**չութիւնը** գործածում է թե՛ իր, թե՛ հերոսների խոսքում՝ նպաստելով տարբեր զգացողությունների դրսևորմանը: Հարցական հնչերանգի միջոցով հեղինակն արտահայտում է իմաստային երանգներ, երբ հարցն ուղղվում է բարձրաստիճան թուրք պաշտոնյային, օրինակ՝ «Մի՞թե ատելությունն այն բանն է, որ կարող է թեթևացնել իմ հոգու մաղձը: Մի՞թե ձեզ սպանելը, ոչնչացնելը կարող է լուծել այն վրեժը, որ ունի հայը ձեր նկատմամբ»<sup>26</sup>:

Ճարտասանական բացականչությունը արդյունք է ոգևորության, հիացմունքի, զարմանքի և հուզմունքի: Օրինակ՝ ավսոսանք ու հուզմունք կա մանկության վերհուշում. «Մայիսի վերջին մոր հետ գնում էին մեղվանոց... **Ինչ օրեր էին...**»<sup>26</sup>:

**ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ:** Մ. Սարգսյանի գեղարվեստական երկերում գործածվում են բառերի, լեզվական տարբեր կառույցների և մտքերի կրկնություններ: Դրանց թողած տպավորությունը պայմանավորված է հեղինակի բառընտրությամբ:

Հեղինակը կրկնությունների միջոցով կարևորում է նկարագրվող երևույթը, ընթերցողի ուշադրությունը սևեռում արտաքուստ ոչ էական հանգամանքների վրա: Օրինակ՝ «Աստված իմ, սրանք թուրքերը բոլորը գործված են **նույն** կտավից: **Նույն** հայացքը, **նույն** խոսքերը, հայերի նկատմամբ **նույն** վերաբերմունքը»<sup>26</sup>:

Կրկնությունը և հակադրությունը հնարավորություն են տալիս ասվածն ընկալել բազմակողմանիորեն. «Արևմուտին պատրաստ են խրամատները: Խրամատը գինվորի *տունն* է. երազանքներով լցված նրա *բնակարանը*: Խրամատը նաև գինվորի *գերեզմանն* է: Նա խրամատին նայում է այնպես, ինչպես կնայեր իր *տանը*, սակայն *անհասցե տան*: Նա խրամատին նայում է որպես իր հնարավոր *գերեզմանին*: Զինվորը և՛ սիրում, և՛ ատում է խրամատը»<sup>27</sup>:

**ՀԱԿԱԴՐՈՒՅԹ:** Մ. Սարգսյանի արձակ երկերում հաճախադեպ են այնպիսի բառերի ու բառաձևերի հականշային կիրառությունները, որոնք հակադիր իմաստներ չունեն, այսինքն՝ լեզվական հականիշեր չեն: Դրանց հականշությունը դրսևորվում է խոսքային որոշակի միջավայրում: Օրինակ՝ «- Դուք տեսե՞լ եք, թե ինչպես են շփոթվում թուրքերը, երբ հայերը հետապնդում են նրանց: Նույնիսկ փախչել չեն կարողանում, որովհետև **սպանվողը** դառնում է **սպանող, զոհը՝ վրիժառու**, և նրանց կարծիքով՝ **վախկոտ** հայր՝ **հերոս**»<sup>26</sup>:

Խոսքում, բնականաբար, գործածվում են նաև միմյանց իրականում հակադիր բառեր, և հականիշ կապակցությունների ընտրությամբ գրողը ստեղծում է յուրօրինակ կառույց: Օրինակ՝ «**Թերի** աշխարհում դուք **անթերի** եք, Դուք **գեղեցիկ** եք, իսկ չորսդին **գեշ** է...»<sup>28</sup>: «...ես ամեն **գեղեցիկի** մեջ տեսնում եմ նախ **տգեղը...**»<sup>28</sup>:

**ԴԱԴԱՐ (ԸՆԴՀԱՏՈՒՄ, ԶԵՂՉՈՒՄ):** Մ. Սարգսյանի գեղարվեստական խոսքի արտահայտչամիջոցների շարքում առանձնանում են դադարները՝ ընդհատումը, զեղչումը: Խոսքի ընդհատումը և զեղչումը բնույթով միմյանց նման են, և երբեմն դժվար է լինում մեկը մյուսից տարբերել: Զեղչումը բառերի կանխամտածված բաց-

<sup>26</sup>Տե՛ս Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջք 133, 101, 106, 47:

<sup>27</sup>Տե՛ս Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջ 253:

<sup>28</sup>Տե՛ս Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջք 38,39:

թողումն է՝ հուզումնային պահերը, մարդկանց բարդ հոգեվիճակները ներկայացնելու միտումով: Երբեմն էլ ասելիքի մի մասը հեղինակը թողնում է ընթերցողին: Այդ առումով բնորոշ է պատերազմի արագ ավարտին չհավատացող տատի խրատը. «-Ջուրը չտեսած՝ բոբիկանալ հարկավոր չէ, բալիկ ջան,- նայեց ինձ տատս,- պատերազմը զենքի կոիվ է, էդպես միանգամից... Ախր, էդպես չի լինում: Դիմացինի ձեռքերում հո բանջար քաղելու քոռ դանակ չէ՞, ախր նա էլ թոփ ու թվանք ունի...»<sup>29</sup>:

**ԲՆԱՆԿԱՐ, ԴԻՄԱՆԿԱՐ:** Բարձրարվեստ են Մ. Սարգսյանի բնանկարները: Դրանք ինքնանպատակ չեն և բխում են նրա երկերի գաղափարական բովանդակությունից: Բնանկարի ոճական առանձնահատկություններից է այն, որ դրանք նախորդում են գործողություններին՝ հոգեբանորեն նախապատրաստելով ընթերցողին: Բնանկարներով հեղինակն արտահայտում է հույզ, ապրում, վերաբերմունք և այդ ամենը փոխանցում ընթերցողին:

Մ. Սարգսյանը նաև դիմանկարի վարպետ է: Քիչ է պատահում, որ միայն արտաքին նկարագրությամբ բացահայտվեն կերպարի վարքագիծն ու էությունը: Հեղինակն ստեղծել է տարբեր դիմանկարներ և հմտությամբ ներկայացրել հերոսներին այնպես, որ ընթերցողը հեշտությամբ ընկալի նրանց ներաշխարհը, մարդկային էությունն ու արտաքինը: Ընթերցողի վերաբերմունքը կերպարների նկատմամբ պայմանավորված է հենց հեղինակի պատկերավոր նկարագրությամբ:

Հետաքրքիր դիմանկար է կերտում հեղինակը թուրք հրամանատարի և օձի համադրությամբ «Խաչված քաղաքը» վեպում. «*Բարձրահասակ, ներքինու դեմք, առանց բուսականության, ծույլ, քնկոտ, մանավանդ անշարժ հայացք և փոքրիկ գլուխ՝ դրված լայն ուսերի վրա*: Այս ամենը նրան նմանեցնում էին, ավելի ճիշտ դարձնում իսկական օձ, այնպես որ տեսնողը սկսում էր նրա մեջ որոնել օձի գալարուն մարմինն ու պոչը»<sup>30</sup>:

Իր նկարագրություններում հեղինակը երբեմն խտացնում է գույները՝ նպատակ ունենալով էլ ավելի ընդգծել կերպարների բնավորության գծերը:

**Եզրակացություններ:** Մ. Սարգսյանի լեզուն և ոճը ուսումնասիրելիս հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

Սարգսյանի խոսքարվեստի քննությամբ պարզել ենք, որ նրա ոճի ամենաբնորոշ հատկանիշը ժողովրդայնությունն է: Առանձնացրել ենք նրա լեզվի այդ հատկանիշը ձևավորող լեզվաոճական միջոցները թե՛ բառային և թե՛ քերականական մակարդակներում:

**1. Բառային մակարդակ.** *համագործածական բառեր, նորաբանություններ և հնաբանություններ, բարբառային և ժողովրդախոսակցական բառեր, օտար բառեր, դարձվածային միավորներ*:

Հերոսների խոսքում կիրառվող բառերը, արտահայտությունները, դարձվածքները համապատասխանում են նրանց մտածողությանը, ապրումներին, հոգե-

<sup>29</sup>Տե՛ս Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջ 153:

<sup>30</sup>Տե՛ս Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջք 123-124:



վիճակներին: Նկատելի է, որ գրողն ունի համազգային լեզվի միջոցները վարպետորեն գործածելու կարողություն: Գրողի կողմից բառընտրությունը կատարվել է թեմային համահունչ և ծառայում է ոճական կոնկրետ նպատակների:

Մ. Սարգսյանի լեզուն ժողովրդական է, կենդանի ու բնական. սա պայմանավորված է թե՛ բառապաշարով, թե՛ քերականական հատկանիշներով: Գրողի վարպետության և լեզվագործածության բարձր տեխնիկայի մասին են վկայում թե՛ նշույթավոր բառաշերտերի, թե՛ միջոճային բառապաշարի ինքնատիպ կիրառությունները:

**2. Քերականական մակարդակ.** Մ. Սարգսյանի լեզվի բնորոշ ժողովրդայնությունը ձևավորում են նաև *ձևաբանական և շարահյուսական* իրողությունների տեղին կիրառությունները:

Գրողի արձակ երկերն ընթերցողին հաղորդում են զգացմունքի և ապրումի բացառիկ անմիջականություն: Էտոսակցական լեզվի տարրերը, բարբառային ձևերը, գոյականի, ածականի, բայի ինքնատիպ կիրառությունները, շարահյուսական իրողությունները ոճականորեն երանգավորում են թե՛ հեղինակի, թե՛ հերոսների խոսքը:

Յուրաքանչյուր գրող, հիմք ընդունելով լեզվում գործող քերականական հիմնական նորմերը, չի սահմանափակվում դրանցով. գրական լեզվի օրինաչափություններից միտումնավոր կատարված շեղումները շատ հաճախ պայմանավորում են գրողի լեզվի բարձր գեղարվեստականությունը:

**3. Հեղինակային պատումի հիմքը տարբեր կառուցվածք ունեցող պատմողական բնույթի երկկազմ նախադասություններն են:** Նյութին համապատասխան, խոսքային իրադրության թելադրանքով պայմանավորված՝ հեղինակային խոսքում երբեմն գերակշռում են բարդ ստորադասական կամ խառը տիպի բազմաբարդ նախադասությունները: Հեղինակը, երբ վերհիշում կամ խոսում է իր հերոսների հուզաշխարհի, մտորումների մասին, օգտագործում է պարզ նախադասություններ կամ բարդ համադասական կառույցներ, իսկ ծավալուն նկարագրությունների դեպքում կամ խոսքին հանդիսավորություն հաղորդելու համար գործածում է խառը տիպի բազմաբարդ նախադասություններ:

**4. Միակազմ նախադասություններ.** դրանք ժողովրդի կյանքն ու կենցաղը, սովորույթներն ու բարքերը նկարագրելու, հայ մարդու՝ բնաշխարհից եկող հոգեբանական գծերը ներկայացնելու համար նախընտրելի շարահյուսական կառույցներ են:

Հեղինակային պատումը առանձնանում է նաև իր **պարբերության լատուցվածքով՝** պայմանավորված ճարտասանական շնչով և հուզական բովանդակությամբ: Որպես ոճական կառույց՝ պարբերությունները առանձնանում են իրենց արտահայտչականությամբ, հուզականությամբ, հանդիսավորությամբ:

Բառերի, կապակցությունների ու առանձին նախադասությունների **կրկնությունները** գրողի լեզվի գեղարվեստականությունը պայմանավորող ոճական հնարանքներից են. կրկնությունները պատումին հաղորդում են նաև երաժշտականություն, համաչափություն, ներդաշնակություն:

**5. Պատկերավորման և արտահայտչական միջոցներից հեղինակը նախապատվությունը տալիս է այն ձևերին (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում, շրջաստյթ կամ շրջաստություն, փոխանունություն, հեզնանք, ճարտասանական հարց, ճարտասանական բացականչություն, կրկնություններ, դադարներ, բնանկար, դիմանկար), որոնք հատկապես նպաստում են նրա գեղարվեստական խոսքի քնարականությանը:**

Հեղինակը լեզվաոճական միջոցներից օգտվել է յուրովի, դրանք ծառայեցրել իր լեզվի ընդգծված գեղարվեստականությանը, ժողովրդայնությանը, հուզականությանն ու հերոսների խոսքի տիպականացմանը: Սրանցով էլ պայմանավորված՝ գրողի ոճը դարձել է հարուստ, բազմազան, քնարական (որոշ դեպքերում նաև էպիկական), ձեռք բերել ժողովրդական խոսքին հատուկ պարզություն ու վճիտություն, սեղմություն ու կենդանություն: Մ. Սարգսյանի ստեղծագործություններին հատուկ են բովանդակային հարստությունը, հումորը, կենսական ճշմարտությունների բացահայտումը, իսկ երբեմն նաև՝ ոճի միօրինակությունը:

#### **Ատենախոսության թեմայով հրատարակվել են՝**

1. Բախչինյան Դ., Անհատական լեզուն որպես լեզվաբանության ուսումնասիրման առարկա, «Հայաստան» հրատ., Լեզվաբանական և մեթոդական ուսումնասիրություններ, Երևան 2010, էջ 66-74:
2. Բախչինյան Դ., Դարձվածքը Մկրտիչ Սարգսյանի արձակում, «Հայաստան» հրատ., Լեզվաբանական և մանկավարժական ուսումնասիրություններ, միջբուհական գիտական ժողովածու, ԵՃՇՊՀ, Երևան 2013, էջ 4-21:
3. Բախչինյան Դ., Մկրտիչ Սարգսյանի արձակի լեզվի շարահյուսական առանձնահատկությունները, «Ասողիկ» հրատ., Կանթեղ. գիտական հոդվածներ, թիվ 2(67), Երևան 2016, էջ 33-41:
4. Բախչինյան Դ., Հեզնանքը և նրա ոճական արժեքը Մկրտիչ Սարգսյանի արձակում, «Ասողիկ» հրատ., Կանթեղ. գիտական հոդվածներ, թիվ 3(68), Երևան 2016, էջ 46-51:
5. Բախչինյան Դ., Ձևաբանական իրողությունները Մ. Սարգսյանի արձակում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 2(647), Երևան 2016, էջ 236-242:
6. Բախչինյան Դ., Հակադրությունները և դրանց ոճական արժեքը Մկրտիչ Սարգսյանի արձակում, Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայագիտական հանդես, թիվ 3(33), Երևան 2016, էջ 236-242:

**Бахчинян Донара Вруйровна**  
**Язык и стиль прозы Мкртчича Саркисяна**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 - "Армянский язык"

Защита диссертации состоится 27 ноября, 2017 в 15.00 на заседании специализированного совета по лингвистике 019 ВАК, при Институте языка им. Г. Ачаряна НАН РА, по адресу 0015 Ереван, ул. Г. Лусаворича 15

**Резюме**

Работа состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы.

Во **введении** представлены актуальность исследования, его материал, объект, цель, задачи, методология, теоретическая и практическая значимость, научная новизна, положения, выносимые на защиту.

**Актуальность темы** обусловлена общим направлением исследований индивидуального стиля писателя, а также тем, что по языку и стилю М.Саркисяна в современной армянской лингвистике нет работ вообще.

**Цель** исследования – изучить стилистические особенности языка М.Саркисяна, его образную систему. Отсюда и **задачи** диссертации: обсудить теоретические основы определения языка и стиля писателя для выработки собственной платформы; выявить и классифицировать лексические и грамматические особенности языка прозы М.Саркисяна, которые позволяют говорить о его индивидуальном стиле.

Работа выполнена с использованием ряда **методов** лингвистического анализа, из которых основными являются методы компонентного анализа, лексических замен, структурный и др.

**Материалом** исследования является язык прозаических произведений М.Саркисяна, изданных при его жизни. Его объем составляет около 136 печатных листов.

**Научная новизна** исследования в том, что впервые в научный оборот вводится язык прозы одного из известных армянских писателей середины прошлого века. Материал исследуется современными лингвистическими методами и по нему можно судить о стилистических особенностях прозы того времени.

**Теоретическое значение** работы в том, что в ней поставлены и решены задачи исследования языка и стиля одного автора в целостности - с использованием современных лингвистических методов. Теоретические положения работы могут быть использованы в дальнейших изысканиях подобного типа, тема может быть продолжена на материале поэзии М.Саркисяна.

**Практическое значение** диссертации в том, что она может быть использована в учебных пособиях по стилистике, на практических занятиях по индивидуальному языку и стилю, в спецсеминарах по литературному мастерству.

В **первой главе** "Словарный запас языка прозаических произведений М.Саркисяна" рассматриваются разные слои армянской лексики в научной классификации, в том числе и фразеология, на основе которых диссертант делает вывод о том, что язык

писателя включает все уровни исследования художественной речи, а стиль его предполагает использование всех языковых средств в речевом выражении.

Во **второй главе** «Грамматические особенности стиля прозы М.Саркисяна» подробно анализируются морфология, синтаксис, язык персонажей, образы, описания, сравнения, эпитеты, метафоры. Особо следует отметить синтаксические приемы М.Саркисяна, синтаксис его предложения, который непосредственно связывается с темпом описания, описываемых событий, с темой повествования и т.д.. С другой стороны, повествование автора исключительно логично, что приближает его стиль к стилю научного сочинения. В стилистическом плане, автор всегда стремится к использованию разговорных стилистических форм и конструкций, что делает его язык более близким читателю.

**Третья глава** - «Средства образного описания и выразительности в прозе М.Саркисяна». Исследование словаря и грамматики языка писателя приводит к выводу о том, что он постоянно стремится к использованию народно-разговорной стихии. В то же время его речемыслительной деятельности и стилю присуща поэтичность, которая проявляется в описаниях панорам природы, в выразительных средствах.

В **заключении** приводится гипотеза о том, что М.Саркисяном используется богатый багаж стилистических средств, который включает не только лексическую стилистику, но и морфологические (диалектные), синтаксические средства. Он значительно прорабатывает фразеологические обороты, диалектизмы, активно использует иноязычные заимствования в нашей разговорной речи для характеристики персонажей, синтаксис предложения в авторских описаниях и т.д..

Исходя из этого **на защиту выносятся следующие положения:** 1) язык писателя, в основном, соответствует нормам современного армянского литературного языка, 2) автор использует все стилистические средства современного армянского, однако в его языке есть особенности, которые выделяют его индивидуальный почерк: это стремление к использованию народно-разговорной стихии, различных типов предложения, разных средств образной выразительности и т.д.; 3) М.Саркисян активно использует материал каринского диалекта, который обрабатывает так, чтобы он был понятен самым широким слоям армянских читателей, 4) М.Саркисян активно использует фразеологические обороты, крылатые слова, пословицы и поговорки, которые обычно перерабатывает в соответствии с задачами своего текста, 5) семантика слова М.Саркисяна, в основном, оставаясь в рамках литературного языка, часто приобретает новые значения.

**Использованная литература** включает основные работы по проблеме – на армянском языке, а также ряд исследований на русском и английском.

**Bakchinyan Donara Vruir**

**The Language and the Style of Mkrtych Sargsyan's Prose**

Dissertation for the degree of Candidate of Philological Sciences for specialty 10.02.01. - 'Armenian language'

The defense will take place at 15.00 on November 27, 2017, at the session of the Specialized Council on Linguistics 019 of HAC in the Institute of Language after H. Acharyan of NAS of RA (15 GrigorLusavorich str., Yerevan 0015, ARMENIA)

**SUMMARY**

The thesis consists of a preface, three chapters, a summary and references.

**The preface** formulates the timeliness of the research, the materials used, the object and the goal, the problems, methodology, its theoretical and practical significance, scientific novelty and status suggested for the defense.

**Timeliness** of the theme is conditioned with the general directions of the research of the individual trait of the style of the writer. Besides, it should be noted that in general there doesn't exist any research in the contemporary Armenian linguistics devoted to the language and the style of M. Sargsyan's works.

**The goal** of this research is to study the stylistic features of the language of M. Sargsyan and the system of characters created by him. From here starts the **objective** of the thesis: to discuss theoretical basis of the definition of the language and the style of the writer for the development of a new, own conception; to reveal and to classify lexical and grammatical peculiarities of the language used in M.Sargsyan's prose, allowing us to speak about his stylistic individuality.

The paper was prepared by using a series of **methods** of linguistic analysis, where the fundamentals are the methods of component analysis, lexical substitutes, analysis of lexical criteria, structural units, etc.

The language of M. Sargsyan's prose is the **basic material** for the research, particularly those that have been published during his life time. The volume of the material is about 136 printers sheet.

The **scientific novelty** of the dissertation research is that for the first time in the scientific circulation is presented a material that is related to one of Armenian well known writer's prose created in the middle of the last century. The author's works are researched by using contemporary linguistic methods, and the bases of which one can judge about the stylistic features of the prose created in that time.

**Theoretical significance** of the dissertation lies in the provision and solution of the problems related to the entire study of the language and the style of one author by using contemporary linguistic methods. Theoretical provisions of this paper could be used in the investigations of the same type in the future, in this case as a topic of investigation one can use M. Sargsyan's poetry.

**Practical significance** of the dissertation is connected with the fact that the outcome of the research could be used in the manuals on stylistics, and also during the practical hours

of individual language and style study, as well as during the special training courses on the mastery of literature.

**The first chapter, "Word stock of language of M.Sargsyan's Prose"** covers various layers of Armenian lexicology in scientific classification including phraseology on the bases of which the author arrives at a conclusion, that M. Sargsyan's language involves all the levels of research of the literary speech; as to his style it assumes all types of linguistic means used in the speech.

**The second chapter, "Grammatical peculiarities of M. Sargsyan's Prose Style"** covers detailed analysis of vocabulary, phraseology, morphology, syntax, language of characters, heroes, description, comparison, epithets, metaphors in the prose is given. It should be noted particularly that the syntactical means used by M. Sargsyan, the syntax of his sentences are all directly connected with the rate of his description, depicted events and also with the theme of the narration, etc. On the other hand the author's narration is exceptionally logical, which approaches his style to the style of scientific composition.

**The third chapter «Means of figurative description and expressiveness in M.Sargsyan's Prose».** The author's research of vocabulary and grammar arrives at a conclusion that he always tends to the use of folk-informal elements. At the same time poetry is typical to his style and speech which is shown in the description of nature panorama, significant means.

**In the conclusion** it is given a hypothesis on that M. Sargsyan has used a large number of stylistic means, which involve not only lexical stylistics but also morphological (dialectal), and syntactical technique. He develops a considerable number of phraseological units, dialectisms, to add to that he actively uses foreign borrowings in our colloquial speech to emphasize the characters of his heroes, and also the syntax of the sentence in the descriptions, etc. Based on what was stated above, the following is proposed for the defense: 1) The writer's language in general corresponds to the literary standards of modern Armenian language, and the use of dialectal forms, words of foreign origin are served as means of stylistic colouring; 2) The author uses all stylistic means that are special to contemporary Armenian, together with that, there are specific features which emphasize the individualism of his handwriting. 3) M. Sargsyan actively uses dialectal forms of speech, which are developed in a way that they could be easily understood by a wide range of Armenian readers; 4) M. Sargsyan actively uses phraseological units and idioms, popular expressions, fables, proverbs and sayings which then he develops and matches with the text. 5) Semantics of M. Sargsyan's words, generally corresponds to the literary standards of Armenian language, but very often the words obtain some new forms of meanings.

**References** include the fundamental works existing on the problem in Armenian, as well as some researches in Russian and English.